

Ձ ե կ ու ց ու լ մ

Բայի սեռի քերականական կարգի ուսուցումը

Բայի խոսքիմասային իմաստը բնորոշվում է ոչ միայն գործողություն կամ եղելություն արտահայտելով, այլև սեռի քերականական կարգով, որը հատուկ է ինչպես դիմավոր, այնպես էլ անդեմ ձևերին: Սեռի քերականական կարգի ուսուցումը կարևոր է ոչ միայն բայի խոսքիմասային իմաստը հասկանալու, այլև շարահյուսական դասընթացն ուսումնասիրելու, նախադասության կառուցվածքի մի շարք իրողություններ բացատրելու համար:

Չնայած որ նոր ծրագրով բայի սեռի ուսուցումը կամընտրական է, բայց և այսպես կարևորելով նրա նշանակությունը լեզվամտածողության ձևավորման գործում՝ անդրադառնանք թեմայի դասավանդման եղանակներից մեկին:

Փորձը ցույց է տալիս, որ թեման համեմատաբար դժվար յուրացվողներից է: այդ պատճառով էլ բայի քերականական իմաստը պետք է պարզաբանել լեզվական օրինակների հիման վրա՝ խուսափելով սահմանումներից: Եթե, օրինակ, աշակերտը հասկանում է, որ, ասենք, բայով արտահայտված գործողությունները խնդրառական տեսակետից տարբեր են, և կարողանում է գործնականում տարբերակել կրավորական բայերը ներգործականներից ու չեզոքներից, իր խոսքում դրանք ճիշտ կիրառել, ապա կարիք չկա կանոնակարգել բայի սեռի հասկացությունը, քանի որ ձևաբանական այդ կարգի սահմանումը բարդ է և համարյա անմատչելի դպրոցականներին:

Ներգործականան, կրավորական և չեզոք սեռի բայերի անջատ – անջատ ուսուցումն

արդյունավետ չէ: Ղասի արդյունավետությունը մեծանում է, երբ դրանք մատուցվում են միաժամանակ, ինչը և հնարավորություն է ընձեռում համեմատելու և հակադրելու տարբեր սեռի բայերի իմաստային և կառուցվածքային առանձնահատկությունները, որը նպաստում է նյութի յուրացմանը:

Ղասի թեման – Բայի սեռը՝ ներգործական, կրավորական և չեզոք:

Ղասի նպատակը – Գործնական առաջադրանքների միջոցով, առանց բայի սեռը սահմանելու տարբերակել բայերն ըստ սեռի և կիրառել բանավոր և գրավոր խոսքում:

Ընթացքը – Գրատախտակին նախօրոք գրվում կամ ցուցադրվում են տարբեր սեռի բայեր և աշակերտներին առաջադրվում է խմբավորել ըստ ներքոհիշյալ հատկանիշների.

ա.բայեր, որոնցով արտահայտված գործողությունը կատարելու համար, բացի կատարողից / ենթակա /, պահանջվում է նաև այլ առարկա / խնդրի /, որն իր վրա կրում է

այդ գործողությունը.

բ.բայեր, որոնցով արտահայտված գործողությունը կրող առարկայից / խնդիր / անցնում է գործող առարկային /ենթակա /

գ.բայեր, որոնցով արտահայտված գործողությունը գործողը / ենթական / կատարում է ինքնին, առանց այլ առարկայի մասնակցության:

Դիցուք, գրատախտակին գրված են հետևյալ բայերը՝ կառուցել – կառուցվել, բացատրել – բացատրվել, ընդհատել- ընդհատվել, զարդարել – զարդարվել, բացել – բացվել, ծաղկել, վազել, ամաչել, բնակվել, հրճվել, սխալվել, երդվել, սանրվել, լվացվել: Կարելի է, որպես օրինակ, յուրաքանչյուր սեռի բայով կազմել մեկական նախադասություն՝ իր գծապատկերով: Օրինակ՝

ա. Տնօրենը պարզևաստրեց Տիգրանին:

Տնօրենը – գործող առարկա, պարզևաստրեց – գործողություն, Տիգրանին – կրող առարկա:

բ. Տիգրանը պարզևաստրվեց տնօրենի կողմից:

Տիգրանը – գործող առարկա, պարզևաստրվեց - գործողություն, տնօրենի կողմից - ներգործող առարկա;

գ. Տիգրանը զբոսնում է :

Տիգրանը - գործող առարկա, զբոսնում է – գործողություն:

Առաջադրանքը կատարելուց հետո բացատրվում է, որ առաջին խմբի բայերը ներգործական սեռի բայեր են, երկրորդ խմբի բայերը՝ կրավորական, իսկ երրորդ խմբինը՝ չեզոք:

Կարելի է ասել, որ դրանք տարբերակելու համար հիմնականում հաշվի է առնվում վ ածանցի գործոնը. ներգործական սեռի բայերը չունեն վ ածանց, բայց հեշտությամբ կարող են ընդունել / օր.՝ գրել – գրվել/, կրավորական սեռի բայերը, ընդհակառակը, ունեն և կարող են հեշտությամբ ազատվել / օր.՝ կառուցվել – կառուցել/, իսկ չեզոք սեռի բայերը կամ չունեն և չեն կարող ընդունել / օր.՝ վազել/, կամ ունեն, բայց չեն կարող կորցնել / օր.՝ հրձվել/:

Պետք է հիշեցնել նաև , որ պատճառական բոլոր բայերը / ազն, եզն, զն ածանց- ներով կազմված / ներգործական սեռի բայեր են /օր.՝ հեռացնել, մոտեցնել, մտցնել/:

Անփոփում – Բայն ունի երեք սեռ՝ ներգործական, կրավորական, չեզոք:

Գործնական աշխատանք – ա. համապատասխան տեքստից դուրս գրել և խմբավորել ներգործական, կրավորական և չեզոք սեռի բայերը.

բ. ներգործական սեռի բայերից կազմել կրավորական բայեր և դրանք գործածել նախադասությունների մեջ

գ. կազմել ոչ ծավալուն տեքստ՝ գործածելով տրված բայերը:

Ուսուցման հաջորդ փուլում պետք է պարզաբանել հետևյալ հարցերը՝

1.Ներգործական սեռի բայերը պահանջում են հայցական հոլովով լրացում և ստանում ու՞մ կամ ի՞նչ/ը/ հարցերը:

Օր.՝ Աշտոր հարգում է /ու՞մ/ իր ընկերոջը / հայցական հոլով/:

Աշտոր բացատրում է /ի՞նչը/ դասը / հայցական հոլով/:

Ներգործական սեռի բայերի պահանջով դրված հայցական հոլովով լրացումները կոչվում են ուղիղ խնդիրներ:

2. Կրավորական սեռի բայերը պահանջում են բացառական /երբեմն նաև գործիական/

հոլովով կամ սեռականով և կողմից կապով արտահայտված լրացումներ, ստանում են ինչի՞ց, ինչո՞վ, ու՞մ կողմից հարցերը:

Օր.՝ Ծառերն օրորվում են /ինչի՞ց/ քամուց /բացառական հոլով/:

Որդին սիրվում է /ու՞մ կողմից/ հոր կողմից / սեռական + կապ/:

Կրավորակն բայի պահանջով դրված լրացումները կոչվում են ներգործող խնդիրներ:

Կրավորական բայերը կազմվում են ներգործական բայերից՝ վ ածանցի միջոցով:

Ե խոնարհման պարզ բայերին վ ածանցն ավելանում է ել, ալ վերջավորությունից անմիջապես առաջ. օր.՝ գրել - գրվել, խոսել- խոսվել, իսկ ալ խոնարհման բայերին՝ ագ, եգ + վ. օր.՝ կարդալ - կարդացել – կարդացվել, աղալ - աղացել - աղացվել:

Պատճառական բայերի կրավորականը կազմվում է անորոշի հիմքից, բայց ածանցների ն –ն փոխարինվում է վ –ի. օր.՝ հագցնել – հագցվել, հեռացնել – հեռացվել, մոտեցնել- մոտոցվել:

Պետք է ցույց տալ, սակայն, որ վ ածանց ունեցող ոչ բոլոր բայերն են կրավորական սեռի. օր.՝ սխալվել, հրձվել, վհատվել, հարձակվել, լվացվել, բնակվել և այլն: Սրանք չեզոք սեռի բայեր են, որովհետև չեն պահանջում ո՛չ կրող առարկա, ո՛չ ներգործող և առանց վ ածանցի բայը չի կարող գործածվել:

Պետք է գաղափար տալ նաև երկսեռ բայերի մասին՝ դա բացատրելով անմիջապես օրինակների վրա: Օրինակ՝ տեսնել բայը երկու կիրառություն ունի՝ և՛ ներգործական, և՛ չեզոք:

ա. Բանաստեղծը տեսնում է իր հայրենիքի լուսավոր /ի՞նչը/ ապագան :/ Բայը ներգործական սեռի է:

բ. Վիրահատությունից հետո պապիկն ավելի լավ է տեսնում : Բայը չեզոք սեռի է:

Գործնական աշխատանքներ

1. Հետևյալ բայերից կազմել պատճառական, դրանցից էլ՝ կրավորական բայեր, բացատրել ուղղագրությունը. հեռանալ, ավելանալ, հավերժանալ, մեծանալ, ոչնչանալ, դադարել, մոտենալ:

2. Հետևյալ ներգործական և կրավորական բայերը, օգտագործելով նախադասությունների մեջ, որոշել, թե որ հոլովներով են արտահայտվել դրանց ենթականերն ու խնդիրները. հարգել – հարգվել, պաշտպանել – պաշտպանվել, մաքրել – մաքրվել, կարդալ – կարդացվել:

3. Վերակազմել տրված նախադասությունները՝ ներգործական բայ – ստորոգյալները փոխարինելով կրավորական բայ – ստորոգյալներով և ընդհակառակը.

ա. Հայկը քաջալերում է ընկերոջը:

բ. Շինարարները կառուցում են նոր շենքեր:

գ. Գյուղացիները մշակում են հողը:

դ. Ուսուցիչը բացատրում է դասանյութը:

ե. Աշակերտները մաքրեցին դպրոցի բակը:

զ. Ծնողները հարգվում են երեխաների կողմից:

է. Գերազանցիկները պարգևատրվեցին տնօրենի կողմից:

ը. Ծառերը շարժվում են քամուց:

թ. Հովեկները հյուրասիրվեցին տանտիրոջ կողմից:

ժ. Վահանը հրավիրվեց ընկերոջ կողմից:

